

Դաս-միջոցառում՝ նվիրված ուսուցչի տոնին

Պլան

Ուսուցիչ՝ Ա. Մանուկյան

Առարկա՝ դասղեկի ժամ

Դասարան՝ 7-րդ Բ

Ամսաթիվը՝ 05 հոկտեմբեր 2021թ.

Տևողությունը՝ 45րոպե

Դաս-միջոցառումը սկսվեց ուսուցչին նվիրված ողջույնի խոսքով:

Աշակերտները իրենց երգով, ասմունքով, բեմադրությամբ գովերգեցին և շնորհավորեցին ուսուցիչներին՝ մաղթելով հավերժինելգեղեցիկ, անսահման համբերություն, սեր և ժպիտներ: Աշակերտները պատրաստել են գեղեցիկ պատառներ՝ նվիրված ուսուցիչներին: Աշակերտուհիներից մեկը՝ Անահիտ Խաչատրյանը, պատրաստել էր նկարների փոքրիկ ցուցահանդես, Սուսաննան՝ քանոնի գեղեցիկ հնչյուններով շնորհավորեց ուսուցիչներին, մյուսները հանդես եկան գեղեցիկ երգու պարով: Ավարտին նրանք անակնկալ ծաղիկներ նվիրեցին ուսուցիչներին: Դասը նպաստավոր էր աշակերտների գեղեգիտական ճաշակի, գիտելիքների և կարողությունների զարգացման համար:

«Հայերենը հայուն խորհուրդն է»

Վիլյամ Սարոյան



# «Հայերենը հայուն խորհուրդն է»

## Վիլյամ Սարոյան

Աշակերտը գալիս է դրոշով:

Ես հայ եմ, իմ երկիրը Հայաստանն է, մեր երկրի դրոշը եռազույնն է՝ կարմիր, կապույտ, ծիրանազույն: Կարմիրը խորհրդանշում է հայ ժողովրդի թափած արյունը, կապույտը՝ պարզ ու ջինջ երկինքը, ծիրանազույնը խորհրդանշում է աշխատանքը:

Արյունից ծորած երիգ մի կարմիր,

Երկնքից պոկված կտոր մի կապույտ,

Հասուն հասկերի շող նարնջազույն,

Եվ դարերի հավատի դրոշ եռազույն:

Աշակերտը գալիս է զինանշանով:

Ես հայ եմ, իմ երկիրը Հայաստանն է, սա իմ երկրի զինանշանն է, որի հեղինակներն են Կողոյանը և Ճարտարապետ Թամանյանը: Զինանշանի վրա պատկերված վահանը երկու կողմերից պահում են արծիվն ու առյուծը՝ ի նշան պետության հզորության:

Գալիս է աշակերը՝ այբուբենը ձեռքին:

Ամեն մի ժողովուրդ ունի իր մայրենի լեզուն: Հայերիս մայրենի լեզուն հայոց լեզուն է: Նրա շնորհիվ է, որ հայ ժողովուրդը, անցնելով հազարամյակների երկար ու ձիգ ճանապարհ, գոյատևում է մինչև այսօր: Հայոց այբուբենը ստեղծվեց այնպիսի մի բախտորոշ պահի, եթե վճռվում էր մեր երկրի լինել, չինելու հարցը և այն աստվածային մի շնորհ էր:

Գալիս է Մեսրոպ Մաշտոցը:

Սիրելիներս, պետք է սիրով ու երկյուղածությամբ պահպանենք այն: Լեզուն պահպանվում ու հարստանում է գործածվելով: Ուրեմն եկե՛ր պահպանենք մեր հարազատ մայրենին, մտածենք, զրենք, խոսենք, արտասանենք և երգենք նրանով: Սիրենք մեր մայրենին, հպարտորեն գործածենք, անաղարտ պահենք այն: Հզորացնենք մեր հայրենիքը, դեպի հավերժություն տանենք հայ և Հայաստան սրբությունները, խոսենք զեղեցիկ և ճիշտ հայերենով, հայերեն ապրենք ու հավերժացնենք հայոց գրերը:

Խումբը - Ծնվե՛ց, որ ծնենք,

Եղավ, որ լինենք

Եվ անմահացավ,

Որ անմահանանք:

Ո՛վ մեծարգո Մեսրոպ Մաշտոց,

Մեր առաջին բացված դպրոց,

Մեր առաջին լեզվի տաճար,

Լուսապայծառ հայոց հանձար:

Մեր հայրենիքին չէին փրկի ո՛չ Տիգրան Մեծի սուրբ, և ո՛չ կ Գրիգոր Լուսավորչի խաչն ու կանքեղը, քանի դեռ այս հոռի վրա հայոց լեզվով և հայերեն տառերով մենք չէինք դրոշմել մեր անունը՝ Այր, Բեն, Գիմ-ը:

Երեսունվեց տար և անկոտրում կամքի տեր մի ժողովուրդ ու մի երկիր է Մաշտոցը մեզ կտակել: Մազաղաթներով ու զրբերով հարուստ այս երկիրն երեսուվեց տառերի «ջոկատով» դարեր շարունակ դիմադրել է իրեն ոչնչացնել և կամ ձուլել կամեցող բոլոր ոսխիներին:

Դարեր ընթացքում, կիսելով հայ ժողովրդի ճակատագիրը, նրա հետ դժվար ու արժանապատիվ ճանապարհ կտրելով, մեր մայրենին Ճոխացած-բյուրեղացած հասել է մեզ՝ մշտապես մսալով ազգային ինքնության հիմքն ու հայելին:

I6I4 տարի առաջ մաշտոցյան հրաշագործությունը՝ հայոց այբուբենը, դարձավ փրկարար փարոս, որի լույսին ապավինած՝ մեր պատմության նավն անխոտոր անցավ դարանակալ փողությունների ու փոթորիկների միջով:

Եվ մեր փոքրաթիվ ժողովուրդն ազնիվ տքնանքով կառուցեց ազգային մշակույթի մեծափառ տաճարը, դեպի ուր ձգվող ուխտագնացությունը վախճան չունի:

Ինչպես որ հացն է սուրբ մարդու համար, այնպես է՝ լեզուն: Մեր լեզուն հոգուց է բխում և հացին հավասար համ է տալիս մեր բերանին:

Ամենակործանարար ոքությունը սկսվում է մայրենի լեզուն կորցնելուց: Մենք հայ ենք, մենք ունենք մեկ միասնական լեզու, հայոց լեզուն, որով կարող ենք հպատանալ և մեզ կոչել աշխարհի ամենալավ լեզու ունեցող ազգերից մեկը:

Մեծ է հայոց լեզվի դերը մեր հայերիս կյանքում: Հայոց լեզուն էր, որ ազգը փրկեց ոչնչացումից, ձուլումից ու հայոց աշխարհը լուսավորվեց իր անմար լույսով:

Չէր լինի այսօր մեր ազգը, չէինք կարողանա խոսել մեր ոսկեղենիկ հայերենով, եթե չլիներ մեր ուսուցիչը, մեր մեծ հանձարը, մեր սուրբ Մեսրոպ Մաշտոցը: Նրա շնորհիվ է, որ հայր մնաց հայ, մնաց իր սուրբ հայրենիքում:

Հայոց լեզուն տունն է հայուն

Աշխարհիս չորս ծագերուն:

Սուշեղ Իշխանի այս դիպուկ բանաձևումը հուշում և հիշեցնում է, որ մայրենին ի ծնե բնակվում է յուրաքանչյուրիս մեջ, ապրում է տանտիրոջ իրավունքով և հորդորում ժառանգորդի երախտագետ սիրով դողալ այդ անսպառ զանձի վրա, որ սերնդեսերունդ փոխանցվել է մեզ, գնահատել այն բացառիկ հրձվանքով, որ բազմալեզու երկնքի տակ մենք հայ ենք ծնվել և խոսում, կարդում, մտածում ենք հայերեն:

Եթե ճանաշես լեզուն քո Հայոց,

Լա՞վ կճանաշես նաև ինքդ քեզ,

Վզգաս թիկունքիդ մի հզոր ամրոց,

Անպարտ կմնաս Մասիս սարի պես...

Լեզվի մասին շատ է զրվել,

Հայոց լեզվի՝ հին, խնկաբույր,

Որ կարո՞ւ է, հույզ ու համբույր,

Անմահական զուլալ աղբյուր...

Այսօր ես եմ դողով զրում,

Ու պատգամում ամեն հայի,  
Որ իր լեզուն հոգում պահի,  
Սուրբ ու սրբոց միշտ փայփայի...

Մայրերն են պահել մեր հայոց լեզուն,  
Երբ մանուկներին օրոր են ասել  
Արցունքն աչքերին, սրտերում՝ վերքը,  
Մեր ազատ կյանքի օրն են երազել:  
Նրանք չեն զիջել մեր երգն ու լեզուն  
Բիրտ հազկերտներին, սուլթանին, ցարին,  
Որոնք մեր վախճանն էին ուզում՝  
Տիրելու համար հայոց աշխարհին:

Բեմականացում.

Հայր- Որդի'ս, զնում եմ Հայաստան, ի՞նչ կցանկանաս, որ քեզ համար քերեմ:

Տղա- Հայրի'կ մի բան, որ թանկ է յուրաքանչյուր հայի համար, որը կհամարվի թանկարժեք զանձ: Այնպիսի մի զանձ, որ կօգնի ինձ ձանաշել, թեկուզ հեռվից մոտ զգալ Հայաստանին:

Հայրը Հայաստանում շատ որոնեց, երկար մտածեց և վերջապես գտավ այդ զանձը:

Տղա-Ի՞նչ է սա, հայրի'կ....բանալի՞, մի՞թե Հայաստանում ամենաթանկարժեք զանձը բանալին է:

Հայր- Որդի'ս, սա Հայաստանի բանալին է, և այդ բանալին մեր հայոց լեզուն է, սովորի'ր և Հայաստանի բոլոր դռները կբացվի քո առաջ: Բանալի, հայոց բանալի, որը թույլ է տալիս բացել ամենատարբեր զաղտնարանների կողպերներն ու անտոիկ պահել մերը, մեր հայոց լեզուն: Յուրաքանչյուրս ունի այդ բանալուց և ձիշտ օգտագործման շնորհիվ կբացվի յուրաքանչյուր կողպեք:

Երգ:

Ասում ենք մայրենի լեզու, քանի որ լեզուն ազգի մայրն է: Հայրն էլ է, որովհետև լեզուն հայրենիք է ստեղծում և ժողովուրդ է պահում: Միասնության մեջ լեզուն ազգի ծնողն է,

որովհետև ծննդավայրը, բնաշխարհ լինելու հետ մեկտեղ, նաև առանձնահատուկ գրավչություն ունեցող լեզու է:

Ամեն ինչից բարձր գնահատենք, ամեն ինչից քանի ու նվիրական պահենք ու պահպանենք մեր ամենամեծ ու միակ անկորնչելի հանձը՝ հայոց լեզուն:

Իմ մայրենի լեզուն նման է մեր հին երկրին: Այն կարծես նրա ժայռերից է ծնվել ու սնվել նրա լազուր լճերից:

Ես հայոց ամբողջ աշխարհն եմ տեսնում, երբ մեկը խոսում է հայոց լեզվով: Բառերն ինձ մերթ զարնան ծաղիկներ են թվում, մերթ՝ սարից փշող գեփյուր:

Հայոց լեզուն հայ ժողովրդի համար հզոր զենք է եղել պաշտպանելու իր ինքնությունը, իր ազգային անկախությունն ու մշակութը: Կյանքի ու մահվան դարավոր պայքարում հայոց լեզուն նույնպես ենթարկվել է ահավոր ճնշման ու հալածանքի:

Հայը, ցրվելով աշխարհով մեկ, թեկուզե սովորել է տարբեր լեզուներ, սակայն մի առանձնահատուկ սիրով ու գուրգուրանքով պահպանել է մեր մայրենի լեզուն:

Ապրեց մեր լեզուն, մեր ոսկեղենիկը, մեր մեսրոպազուն,

Շողաց, հուրիբաց նա բոցի նման:

Յուրաքանչյուր ազգ աշխարհին ու ժողովրդին ներկայանում է իր մեծերով: Մերոնք, հարաբերվելով համայն մարդկությանն ու ողջ աշխարհին, զիտակցում են, որ մեր երկրի գոյության և հարատևման ամենակարևոր գրավականը հայոց լեզուն է: Պատահական չէ, որ մեծ փառք ու ճանաչում ունեցող հայտնիները փառարանում և մեզ են կտակում մայրենին:

Աֆորիզմներ

1. Ինձ հաջորդող սերունդներին, թոռներիս, ծոռներիս կտակում եմ տիրապետել հայոց լեզվին: Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թե արյուն, այլ

գաղափարներ և գաղափարների մեջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է: Գիտցե՛ք, որ իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է ու կմնա, քանի ապրում եմ, հայոց լեզվին տիրապետելը:

2. Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության և էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանձարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճնի գանձարանը, հոգին ու հոգեբանությունը (Հովհ. Թումանյան):
3. Բավական չէ ազգասեր ու հայրենասեր լինելը, պետք է մի քիչ էլ լեզվասեր լինել, պետք է սիրել, պաշտել, զգվել հարազատ մոր հարազատ լեզուն. Այս սերը միայն կարնա մեր առջև մեր լեզվի անհատնում ճոխությունը, նրա նրբությունը և քաղցրությունը (Դ. Աղայան):
4. Իր մայրենի լեզուն վատ իմացողը կես մարդ է, չիմացողը՝ թշվառ, ծառից ընկած մի տերեւ, որ տատանվում է ամեն մի պատահական բամուց (Ստ., Զորյան):
5. Մայրենի լեզվի բառերը զգում ենք, ապրում, իսկ օտար լեզվինը՝ սովորում, հասկանում (Ավ. Խասհակյան):

Հայերենն իր անկրկնելի հմայքով գերել է նաև օտարներին.

Հայերենը՝ իբրև Արարատյան լեզու, կոչվում է «Աղոթքի լեզու», այն աստվածային ճոխ ու աննման լեզու է:

Նիկողայոս Մատ

Ճոխ է հայոց լեզուն, և առատորեն կվարձաւրվի նա, ով կուտումնասիրի այն:

Զորջ Բայրոն

«Ձեր հնամենի լեզուն ես չգիտեմ, բայց սիրում եմ այն: Դրա մեջ արևելքն եմ զգում, դարերն եմ նշմարում այնտեղ, տեսնում եմ անցյալի խորհրդավոր նշույլի շողարձակումը: Ինձ համար պարծանք է հայերեն թարգմանվելը»:

Հայոց գրեր. մաշտոցյան այս հրաշալի ստեղծագործությունը՝ հայկական այրութենի կատարելությունը մեր գոյության վկան է, պատմության հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճնի գանձարանը:

Աստվածային լեզու է մեր հայերենը, ճոխ ու աննման, աղոթքի լեզու է մեր մայրենին, այն երկնային երաժշտությունը, որը հնչում է յուրաքանչյուրիս հոգում: Ես հպարտ եմ իմ մշակույթով, հպարտ եմ ազգիս անցած հերոսական ճակապարհով, այն մայրենիով, որը մեզ սովորեցնում է սարեր շարժել, ժայռեր ճեղքել:

Մաշտոցյան լույսն իմ հոգում հնչում է որպես աղոթք: Միասնական է իմ ժողովուրդը, հայր պետք է շենացնի ազգի օշախը, տուն կանչի այն ընտ անիքներին, որոնք Մասիսի լանջին կանգնած, եռագույնը ծածանելով՝ բռնեն հայկական «Քոչարին», ու քննա հայկական հողը. չէ որ հայը իր հողի վրա է ամուր....

Հպարտ եմ, որ հայ եմ, որ մասնիկն

Եմ այս մի բուռ ազգի, ազգ, որի  
շուրթերին դրոշմված է հավերժ հնչող  
սուրբ մեղեղին՝ հայոց լեզուն, որը  
յուրաքանչյուրիս հոգում հաղթանակի երազանքներ է արթնացնում....

### ԲԵՄԱՀՐՈՒԹՅՈՒՆ

-Կարելի՞ է:

-What?

-Աստվածային հրաշք ես, հայուհուն հարիր յուրահատուկ գեղեցկություն  
ունես:

-I don't understand.

-Դու հայուհի՝ ես՝ աչքերդ վկա:

-I am Armenian, but I don't understand what are you talking?

-Ինչո՞ւ չես խոսում հայերեն.

Ես երգ եմ հյուսում քեզ համար,

Հոնքերդ հպարտ ու կամար՝

Իշնում ես հայոց լեռներեն:

Ինչո՞ւ չես խոսում հայերեն:

Ես երգ եմ հյուսում քեզ համար,

Դու չես հասկանում իմ լեզուն:

Ես խորթ եմ, օտար քո հոգուն,

Բայց քո տեսիլով խանդավառ,

Ես երգ եմ հյուսում քեզ համար:

Հոնքերդ հպարտ ու կամար

Հանց վեհ տաճարները հայոց

Հայացրդ մաղում է ամառ.

Հայրից են աչքերը քո բոց,

Հոնքերդ հպարտ ու կամար...

Իշնում ես հայոց լեռներեն

Ինչպես թեթևոտ մեր պախրան,

Նայացրդ այնպես նաիրյան

Հմայրդ այնպես հայերեն՝

Իշնում ես հայոց լեռներեն:

Ինչո՞ւ չես խոսում հայերեն:

Նորքից ես թռել դու իմ լոր,

Զնզուն է երգել քեզ օրոր,

Մասիսն է հսկել վեհորեն:

Ինչո՞ւ չես խոսում հայերեն:

-Masis, is it Ararat? Am I true?

-Yes, Դա Արարատն է:

- I like Ararat, I like Armenia.

Մեր շուրջը լեզուներ նոր ու հին,

Մեր շուրջը խոսում են այլորեն,

Եկ խոսենք, եղբայր իմ,

Հայերեն:

Կուլ չերթանք այս ահեղ լափումին,

Թույլ չտանք մեր լեզուն ավերին,

Եկ խոսենք, մի՛շտ խոսենք

Հայերեն:

Մեր հանդեպ ապագա լուսեղեն,

Թող հնչի մեր լեզուն վեհորեն,

Թող այրվի մեր հոգին

Այդ հրեն:

Այս օտար աշխարհի ցրտերում

Եկ սիրենք մեր լեզուն ջերմորեն,

Եկ վառենք ու վառվենք

Հայերեն:

- Մենք հայ ենք, մեր լեզուն հայերենն է:- երեքով

Լեզուները կենդանի են, երբ նրանցով խոսում են, կիրառում:

Ճանաշենք մեր ճնի հայերենը, սիրենք և սովորենք այն, լինենք գրագետ,

կարողանանք օգտվել մեր կորցրած աշխարհների ավերակ բերդերի նման մեր

հրաշք բարբառներից:

Սիրենք մեր լեզուն առանց բարձրագուշ աղաղակների՝ անկախ տոներից ու

միջոցառումներից:

Սիրենք ճշմարիտ ու անկեղծ: